



ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Երևանի Մխիթար Հերացու Անվան
Պետական Բժշկական Համալսարան

- **Մասնագիտական կողմնորոշման էքսպո-ցուցահանդեսներ**

Ցուցահանդեսների կարող են մասնակցել բոլոր հետդիպլոմային ամբիոնները, ներկայացնել իրենց ծավալած գործունեությունը, ուսումնական առանձնահատկությունները, միջազգային գործունեությունը և ապագա մասնագիտության դրական կողմերը: Ցուրաքանչյուր էքսպոյից առաջ՝ սահմանված ժամանակահատվածում, սահմանված կուրսերի ուսանողները հնարավորություն են ունենալու **Կարիերայի Կենտրոն** նախապես ներկայացնել իրենց ինքնակենսագրականն ու մոտիվացիոն նամակը, որը ուղղվելու է համապատասխան ամբիոններ, ինչի հիման վրա ամբիոնը կարող է «Ապագայի տոմս» տրամադրել մասնակցին, ինչը հնարավորություն է տալու մասնակցին տեղում ամբիոնի վարիչի ուղեկցությամբ մեկ կամ մի քանի օր անցկացնել վյալ Բազայում և ծանոթանալ մասնագիտության առանձնահատկություններին:

- Ստոմատոլոգների համար / Հոկտեմբերի երկրորդ դեկադա
- Վիրաբուժական մասնագիտությունների համար / Նոյեմբերի առաջին դեկադա
- Թերապևտիկ մասնագիտությունների համար / Նոյեմբերի առաջին դեկադա
- Ոչ կլինիկական մասնագիտությունների համար / Նոյեմբերի երկրորդ դեկադա

- **Մոտիվացիոն հանդիպումներ առաջին կուրսեցիների համար**

Հանդիպումները կարող են իրականացվել ձմեռային ճամբարի ֆորմատով, նախապես գրանցվելով: Հանդիպումների նպատակն է լինելու ցածր կուրսի ուսանողների և ուղորդների կայացած մասնագետների հանդիպումների կազմակերպում, որի ընթացքում նրանք կկիսվեն իրենց ացած ուղու պատմություններով, կանցկացնեն հանրամատչելի սեմինար բժշկության վերաբերյալ: Ճամբարի ընթացքում կկազմակերպվեն նաև հանրային խոսքի, ներկայացուցչականության և բժշկի կերպարի վերաբերյալ պրակտիկ դասընթացներ: